А. М. ПОГОСЯН, Карсская область в составе России, Изд-во «Айастан», Ереван, 1983, 285 с.

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, *Կարսի մարզը Ռուսաստանի կազմում, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1983, 285 էջ։*

Ա. Մ. Պողոսյանը հայտնի է Ղրիմի պատերազմի և Կարսի մարզի սոցիալ-քաղաքական պատմության մասին գրած մենագրություններով ու հոդվածներով։ Այժմ նա հրապարակի վրա է դրել «Կարսի մարզը Ռուսաստանի կազմում» մենագրությունը, որտեղ Կարսի մասին պատմաաշխարհագրական համառոտ տեղեկությունների շարադրանքից հետո հանգամանորեն անդրադարձել է Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո այնտեղ գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական հարաբերություններին, 1905-1907 թթ. հեղափոխական շարժումներին, իմպերիալիստական պատերազմի և նրանից հետո տեղի ունեցած իրադարձություններին։

Պատմական դեպքերն այնպիսի ընթացք ունեցան, որ Կարսը և նրան հարակից շրջանները XIX դ. ռուս-թուրքական երեք պատերազմների ժամանակ (1828—1829, 1853—1856, 1877—1878) ազատագրվեցին ռուսական զորքերի կողմից, բայց եվրոպական պետությունների միջամտության հետևանքով առաջին երկու պատերազմների ժամանակ մարզը չմտավ Ռուսաստանի կազմի մեջ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո մարզը միացավ Ռուսաստանին։ Այդ կարևոր ակտից հետո մարզի բնակիչներն ազատվեցին ֆիզիկական բնաջնջման ու ձուլման վտանգից, և նրանց կյանքը կապվեց Ռուսաստանի հետ։ Ռուսական առաջավոր մշակույթն իր բարերար ազդեցությունն ունեցավ մարզի բնակիչների մշակութային կյանքի վրա։ Հետագայում ցարական բռնապետության դեմ ուղղված ռուսական հեղափոխական պայքարի ալիքները հասան նաև Կարս։

Հեղինակն իր գրքում անդրադարձել է ինչպես ռուսական, այնպես էլ հայկական մինչ հեղափոխական շրջանի պատմաբանների գրքերին, որոնք վերաբերում են Կարսի պատմությանը, շատ տեղերում ճշգրտել է այդ հեղինակների սխալներն ու բացթողումները։ Ա. Պողոսյանը ցույց է տվել, որ այդ հեղինակները Կարսի պատմությանը վերաբերվող փաստական նյութը շարադրելիս ամեն ինչ կապել են ցարական Ռուսաստանի զենքի հաղթանակի հետ, մոռացության մատնելով Արևելքում նրա վարած գաղութային քաղաքականությունը։ Նա քննադատության կրակի տակ է առել թուրքական մի շարք պատմաբանների, որոնք ձգտում են «ապացուցել», թե Կարսի մարզը բնիկ թուրքական է, իսկ այնտեղ ապրող հայերը՝ եկվորներ։ Հեղինակը միաժամանակ հերքել է թուրք պատմաբանների միտումը՝ արդարացնելու հպատակ ազգերի նկատմամբ թուրքական կառավարության վարած դաժան քաղաքականությունը։ Աշխատության այս բաժնում Ա. Պողոսյանը քննադատել է նաև դաշնակցական առանձին հեղինակների, որոնք անհիմն ժխտում են հայ ժողովրդի արևմտյան հատվածի ռուսական կողմնորոշումը և մարզում հեղափոխական շարժումների գոյությունը։ Պատմական փաստերի և վավերագրերի հիման վրա գրքում վերլուծված են 1918 և 1920 թթ. Բաքումում ու Ալեքսանդրապոլում կնքված դաշնագրերը, ցույց են տրված դրանց բացասական հետևանքները հայ ժողովրդի համար։

Հեղինակի ուշադրության կենտրոնում են եղել նաև վերջին տասնամյակներում սովետահայ պատմաբանների գրած այն աշխատությունները, որոնք վերաբերում են հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանի և Կարսի մարզի պատմության հարցերին։ Գնահատելով դրանք, Ա. Պողոսյանը միաժամանակ նշել է, թե իր աշխատության նպատակն է լրացնելու այն բացը, որ գոյություն ունի Կարսի մարզի ամբողջական պատմության շարադրման գործում։ Հեղինակը միաժամանակ գիտական շրջանառության մեջ է դրել Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի ու Լենինգրադի արխիվներից քաղված շատ վավերագրեր։

Հին հունական պատմաբանների (Հերոդոտ, Քսենոֆոն, Ստրաբոն) աշխատություններից բերված քաղվածքներով Ա. Պողոսյանը ցույց է տվել, որ Կարսի մարզի տարածքը շատ հին ժամանակներից բնակեցված է եղել հայերով։ Իր այդ միտքը հաստատելու նպատակով նա դիմել է

նաև հայ մատենագիրներից շատերին (Փ. Բուզանդ, Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի, Սեբեոս, Ղևոնդ, Ասողիկ, Ա. Լաստիվերտցի և ուրիշներ)։ Նա ցույց է տվել, որ միայն Թուրք-սելջուկյան, Թաթար-մոնղոլական և Լենկթեմուրի արշավանքների, ապա Թուրք-պարսկական պատերազմների ժամանակներում էր, որ Կարսի հայ բնակիչների կողքին երևացին եկվոր Թուրքեր և, չնայած վերջիններիս մուտքին, մինչև Ռուսաստանի կազմի մեջ մտնելը մարզում հայ բնակիչները հարաբերական մեծամասնություն էին կազմում։

«1877—78 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմը և Կարսի մարզի միացումը Ռուսաստանին» գլխում հեղինակն անդրադարձել է Թուրքական բռնակալական սիստեմի դեմ ոտքի ելած բալկանյան և այլ ժողովուրդների, ինչպես նաև հայերի ազգային-ազատագրական շարժումներին, ցույց է տվել դրանց նկատմամբ եվրոպական պետություններ և, մանավանդ, Անգլիայի վարած երկդիմի քաղաքականությունը։ Գրքում մանրամասն շարադրված և վերլուծված են 1877 Թ. ապրիլին սկսված ռուս-Թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատի անցքերը, հայկական կամավորական չոկատների կազմակերպումը, մարտերում նրանց ցուցաբերած խիզախությունը, ռուսական բանակին Կարսի հայ բնակիչների ցույց տված ընդունելությունը և օգնությունը։ Ռուսական հաղթական բանակն ազատագրեց Կաղզվանը, Արդահանը, Օլթին, Բայազետը, Ղարաքիլիսան։ Արդահանի ազատագրումից հետո 1877 Թ. նոյեմբերին կազմակերպվեց Կարսի մարզը՝ իր 40 օկրուգներով, 14 տեղամասերով և 196 գյուղախմբերով։

Հեղինակը հանգամանորեն վերլուծել է ժամանակի միջազգային դրությունն ինչպես Սան-Ստեֆանոյի պայմանագրից առաջ, այնպես էլ դրանից հետո։ Նա ցույց է տվել, որ եվրոպական պետությունները, հատկապես Անգլիան, Ավստրո-Հունգարիան և Գերմանիան Արևելքում իրենց քաղաքական և տնտեսական շահերից ելնելով՝ կատաղորեն դնում էին ընդունված պայմանագրի վերանայման հարցը և հասան նրան, որ հրավիրվեց Բերլինի կոնգրեսը, որի ընդունած պայմանագրով ռուսական բանակի ազատագրած Բայազետն ու Ալաշկերտը վերադարձվեցին Թուրքիային։

Աշխատության մեջ հանգամանորեն վերլուծված են մարզի սոցիալ-տնտեսական հարաբերությունները մինչև Ռուսաստանին միացվելը և դրանից հետո։ Նշված են Թուրքիայում գոյություն ունեցող հարկերը, ցույց է տրված, Թե գյուղացիներն ինչպիսի դաժան շահագործման էին ենթարկվում կառավարության, տեղական բեկերի և վաշխառուների կողմից։ Այսպես, Օրինակ, Կարսի փաշալիքում 1870 Թ. յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն տարեկան վճարել է 31 ռ. 50 կ., իսկ 1874 Թ.՝ 46 ռ. հարկ։ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո գյուղացիների վճարած հարկերը չէին անցնում 20 ռուբլուց։ Ռուսաստանին միանալուց հետո կարգավորվեցին մարզի ճանապարհները, սկսվեց և ավարտվեց երկաթուղու կառուցումը, աշխուժացավ բնակչության մշակութային կյանքը, բացվեցին դպրոցները և այլն։

«Կարսի մարզը ռուսական առաջին հեղափոխության տարիներին» ենթագլխում բերված նյութերը պատմում են Կարսի մարզ Թափանցած ռուսական հեղափոխության ալիքների, այնտեղ գործած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքի մասին։ Մարզի գլխավոր քաղաք Կարսում 1903—1904 ԹԹ. սկսվեցին գործադուլներ։ 1904 Թ. Կարսում երևան եկավ սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը։ Ռուսական առաջին հեղափոխությանն ավելի ակտիվ մասնակցություն ունեցան Կարսի կայազորի զինվորական ուժերը, որոնք տպագրեցին ժողովրդին ուղղված բազմաթիվ թռուցիկներ ու կոչեր։ Պատմելով այդ բոլորի մասին, հեղինակը միաժամանակ ցույց է տվել, որ բանվորական ու զինվորական հեղափոխական ելույթները թափանցեցին գյուղ ու իրենց ոլորտի մեջ առան գյուղացիներին։

Գրքի ամենածավալուն մասը Կարսի մարզը առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում գլուխն է, որի մեջ մանրամասն վերլուծվել են առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքական պետության պլանները, մասնավորապես «մեծ Թուրքիա» ստեղծելու պանթուրքական ծրագիրը, որի նպատակն Անդրկովկասի և Միջին Ասիայի օկուպացումն էր։ Ինչպես ցույց է տրված աշխատության մեջ, 1914 Թ. պատերազմը սկսելուց որոշ ժամանակ անց երիտԹուրքերի պարագլուխներից Էնվերը ուժերը կենտրոնացրեց Սարիղամիշի տակ՝ նպատակ ունենալով ներխուժել Անդրկովկաս։ Հավատակիցների կրոնական զգացումները բորբոքելու նպատակով պատերազմը «սրբազան» հայտարարվեց։ Այս գլխում լուսաբանված է նաև պատերազմական գործողությունների ժամանակ երկու կողմերի զինվորական ուժերի դասավորությունը և Սարիղամիշի տակ Թուրքական բանակի խայտառակ պարտությունը, շարադրված են ռուսական բանակի՝ դեպի Արևմտյան Հայաստան առաջխաղացման և ազատագրման համար մղված մարտերի պատմու-

թյունը։ Հեղինակը միաժամանակ անդրադարձել է Փետրվարյան բուրժուազեմոկրատական հեղափոխությունից հետո Անդրկովկասում և Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, փաստերով մերկացրել Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի վարած հակաժողովրդական քաղաքականությունը։

Ռուսաստանի հեղափոխական ամենակարևոր կենտրոնների՝ Պետերբուրգի և Մոսկվայի, բանվորների ու զինվորների հեղափոխական ելույթները շատ շուտով արձագանք են գտնում նաև Անդրկովկասում և ապա Կարսում, որի կայազորի զինվորները կազմակերպում են խորհուրդ։ Գրքում բազմաթիվ փաստերի հիման վրա շարադրված ու գնահատված են այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան Կարսի մարզում՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո։ Ա. Պողոսյանը միաժամանակ մերկացրել է 1918 թ. սկզբին Անդրկովկասը գրավելու վերաբերյալ թուրքական իշխանությունների պլանները։ Այդ զավթողական նպատակները կենսագործելու ճանապարհին թուրքական շարգարարները ցանկանում էին կազմակերպել հայ ժողովրդի նաև արևելյան հատվածի փնաջնջումը։ Արշավանքի ընթացքում նրանք օգտագործեցին նաև այն, որ Անդրկովկասյան սեյմը երկրամասը հայտարարել էր Ռուսաստանից անկախ։ Թուրքական զավթիչները գրավեցին Էրզրումը, ապա շարժվեցին դեպի Կարս։ Հեղինակը մանրամասն շարադրել է թուրքական և հայկական ուժերի դասավորությունը, նրանց թվաքանակը և զինվածությունը, Կարսի գրավումից հետո թուրքերի առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ։ Ինչպես ճիշտ նշել է Ա. Պողոսյանը, անդրկովկասյան կառավարության դավաճանության պատճառով Կարսի մարզը համարյա թե առանց դիմադրության անցավ թուրքերին։

1918 թ. Թուրքիան երկու ճակատում պարտություն կրելով՝ ստիպված դադարեցրեց իր գործողություններն Անտանտի ուժերի դեմ, իր ռազմական ուժերը հանեց Անդրկովկասից, թողեց նաև Կարսի մարզը, որը մտավ Հայաստանի բուրժուական հանրապետության կազմի մեջ։ Հեղինակը բազմաթիվ ու բազմաթիվ փաստեր է բերում այն ծանր վիճակի մասին, որ 1918—1920 թթ. ապրեցին Կարսի մարզի բնակիչները։ Երկիրն այդ վիճակից հանելու միակ ուղին սովետական կարգերի հաստատումն էր, և Հայաստանում, այդ թվում նաև Կարսի մարզում բռնկվեց մայիսյան ապստամբությունը, որի ճնշումից հետո Հայաստանի աշխատավորների վիճակը է՛լ ավելի ծանրացավ։ 1920 թ. սեպտեմբերին սկսվեց թուրքական զավթիչների նոր արշավանքը, շատ չանցած ընկավ Կարսը, ապա Ալեքսանդրապոլը։ Գրված վայրերում թուրքական օկուպանտները վարում էին հայ բնակչությանը ոչնչացնելու քաղաքականություն։

Աշխատությունը գրելիս Ա. Պողոսյանը թուրք հեղինակներից օգտագործել է միայն նոր շրջանի պատմաբանների աշխատությունները, որոնք առանց հիմք ունենալու ժխտում են Հայաստանի գոյությունը։ Լավ կլիներ, եթե նա դիմեր XVII—XIX դդ. թուրք պատմաբաններին, որոնք գրում են Հայաստանի և նրա մեջ գտնվող գավառների մասին։ Հեղինակը չի օգտագործել Մ. Մաշտոցի անվան մատենադարանում Կարսի մասին պահվող վավերագրերը և նույնիսկ ձեռագիր աշխատությունները։

Ամփոփելով ասենք, որ Ա. Պողոսյանի աշխատությունը կարևոր ներդրում է Կարսի մարզի պատմության, Ռուսաստանի կազմում նրա անցնելու նշանակության, մարզի բնակիչների սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացման, մարզում հեղափոխական շարժումների լուսաբանման և այլ հարցերի տեսակետից։

ՀԱՅԿԱԶ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր